

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՊՈՆԵՒԱՅՈՒՄ

Սովորատ Խանյան

Բ. գ. դ., պրոֆեսոր

ԱրՊՀ

*Բանալի բառեր. 1915թ., ապրիլի 24, ցեղասպանություն, Դեր-Ջոր, բանաստեղծներ, 100-րդ տարելից, սփյուռք, Սոււմալիթ, Բաքու, Արցախյան պատերազմ, հաղթանակ*

2015 -ի ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցն է: Դա համազգային անանց ցավի տարելիցն է, մեկ ու կես միլիոն անմեղ հայերի բզկտված սրտերի ճիչը, Տիգրանված ու Մաշտոցված կորուսյալ երկրի մշտադողանց կանչը, որն ունի արյունամած սկիզբ, սակայն սփոփանքի վերջ երբեք: Այստեղից էլ այն մշտամոռմոք երևույթը, որն առնչվում է մեր գրականության հետ, կոնկրետ այն երևույթի, որ 20-րդ դարի սկզբի հայրենապատումը հազեցվեց կորստի մրմուռով, վշտի զգացումով: Ինչպես բնութագրել է Սիամանթոն, պահանջ զգացվեց «մաքրափայլ թերթերի վրա ցեղին ցավը և ցեղին ուժը բանաստեղծել»: Մեր պատմությանը գումարվեց ժողովրդի ողբերգական ներկայի հառաչանքն ու ցավը: Սիամանթոն «Կարմիր լուրեր բարեկամես» ժողովածուում բերեց իր հոգու կսկիծը, ազգային ճակատագրի ծանրությունը, մահվան տեսիլները, կոտորածների սարսափները:

Դանիել Վարուժանը, ժողովրդի նոր ողբերգության կսկիծը սրտում, գրեց «Ջարդը» բանաստեղծությունը: Ե՛վ Սիամանթոն, և՛ Վարուժանը ամեն դեպքում վստահ էին, որ վերջ կդրվեն հայկական ջարդերին Օսմանյան Թուրքիայում: Սակայն թուրքը մնաց թուրք: Սուլթան Համիդի ժառանգորդ երիտրուրբերը ավելի դաժան գտնվեցին հայ ժողովրդի, նրա մտավորականության հանդեպ: 1915-ի զոհերը դարձան նաև մեր ականավոր գրողները:

1915 թվականից հետո հայ գրականության մեջ սկիզբ առավ Հայոց մեծ ցեղասպանությունը դատապարտող պոեզիան: Հայ ժողովրդի անբուժելի ցավի ճիչը, կորուսյալ հայրենիքի կարոտը, Դեր-Ջորի անապատում անթաղ մնացած հազարավոր մայրերի ու մանուկների վիշտը, վրեժի կանչը, հույսի ծփանքը պատկերվեցին մեր գրողների երկերում: Այդ պոեզիայում բիբլիական Արարատը խորհրդանշվեց որպես եղևնիական պատանդ: Հայ գրականության կանգուն պյունների՝ Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Վ. Տերյանի, Ե. Չարենցի, Վ. Թերեյանի, Ն. Ջաղյանի և մյուս մեծությունների սրտերում արյուն կաթեց: Մեծ Լոռեցին ժամանակից շուտ ճերմակած գլուխը խոնարհեց ավերված երկրի առջև, կրակ առավ «Հայոց հրդեհի կարմիր բոցերից», կրծքի տակ վառեց «Հայոց աշխարհի մեծ կերոնները... Մասիսն ու Արան, Սիփանն ու Սըրմանց, Նեմրույթ, Բանդուրեք», հոգու աչքերով նրանց փնջերին տեսավ միլիոնավոր անմեղ զոհերին, որդիաբար ու հայրաբար աղոթեց ու կարդաց իր հոգեհանգիստը.

*Հանգև՛ք, իմ որբև՛ր... իզո՛ւր են հուզմունք, իզո՛ւր և անշահ...*

Մարդակեր գագան՝ մարդը՝ դեռ երկար էսպես կմնա...<sup>1</sup>

Վ. Տերյանը, որ մինչև Առաջին համաշխարհայինը սրտի ցավով բացականչել էր՝ «Մի՞թե վերջին պոետն եմ ես, Վերջին երգիչն իմ երկրի», Մեծ եղեռնից անմիջապես հետո գրեց ավերված ու հրկեզ հոգու երգը.

*Տեսնում եմ ահա գյուղերը մեր խեղճ,*

*Եվ թուխ դեմքերն այն տխրության սովոր,*

*Իմ ժողովուրդը անել վշտի մեջ,*

*Երկիրն իմ անբայտ ու աղետավոր...<sup>2</sup>*

Տաղանդավոր բանաստեղծի «Երկիր Նաիրի» շարքն ամբողջության մեջ հնչեց որպես տագնապ, որպես այրող կարոտ «արնաներկ» երկրի վերաբերյալ, անմարում սեր դեպի արքայական մեր լեզուն, լուսն հավատ՝ գալիքի հանդեպ:

Հայոց խոր գիշոր խոցեց Ավ. Իսահակյանի զգայուն սիրտը: Նա լացեց «ավեր հայրենիքի», «անհուն, անձիր տառապանքի, զարհուրանքի ու եղեռնների» գոհ դարձածների վիշտը և տեսնելով, որ հայրենիքը չար ուժերի դեմ մնացել է մենակ, ցավով ընդհանրագրեց. «Իմ հայ ժողովուրդ, Քաջ հայրերիդ պես կռվում ես և դու, Սակայն չգիտես՝ Ով է թշնամիդ...»:<sup>3</sup>

Վարպետը խիստ քննադատեց եվրոպական պետությունների ապերախտությունն ու սառնասիրտ վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ:

Ճիշտ է նկատված, որ 20-րդ դարն սկսվել է ոչ թե 1900թ. հունվարի 1-ից, այլ՝ 1914թ. օգոստոսի 1-ից՝ Սարսևոյի կրակոցից: Դա առավելագույնս վերաբերում է հայ ժողովրդին:

Հավատարմով Ռուսաստանի օգնությամբ անդունդի եզրին գտնվող հայրենիքը փրկելու ակնկալիքներին՝ բազմաժամանակ հայ կամավորականներ մեկնեցին ռազմաճակատ՝ ռուս զինվորների հետ համատեղ մարտնչելու Օսմանյան Թուրքիայի հրոսակների դեմ: Կամավորականների շարքերում էր 18-ամյա Ե. Չարենցը: Զինվոր բանաստեղծի առջև Երկիր Նաիրիի փոխարեն փոփեց այրյունոտ «կապուտաչյա հայրենիքը»՝ որպես զարհուրելի դժոխք, ու ծնվեց նաև «Դանթեական առասպել» պոեմը: Չարենցը տեսավ իր մայր ժողովրդի բնաջնջումը, ու հոգու շերտերում կախվեց ինչու-ների շարքը.

*Ինչո՞ւ է երազն այս աշխարհավեր*

*կախվել մեր գլխին այսպես կուրորեն,*

*Ինչո՞ւ են փռում այսքան ցավ, ավեր,*

*հողմերը այս չար ե՞րբ պիտի լռեն:*

*Եվ ո՞վ է լարում այսպիսի դավեր,-*

*կյանքը դարձնում նզովյալ գեհեն:<sup>4</sup>*

Այս հարցումը հայ ժողովրդին անլուր տառապանքներ բերող պատերազմի դեմ է: «Դանթեական առասպել»-ին հաջորդում է Չարենցի «Աթիլլա» երկը: Բանաստեղծի բացատրությամբ՝ «նրանում պատկերված է հոների արքա հզոր Աթիլլը՝ որպես պատերազմի ահավոր սպառնալիք, որ կախված կմնա, քանի արդարությունը չի մտել հունի մեջ»:

<sup>1</sup> Զ. Թումանյան, Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 2, «Հայաստան» հրատ., 1969, էջ 222:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 224:

<sup>3</sup> Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 1, «Հայաստան» հրատ., 1973, էջ 281:

<sup>4</sup> Ե. Չարենց, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 2, ՀՄՍՌ, ԳՍ հրատ., 1963, էջ 17:

Հայոց մեծ ցեղասպանությունը տարբեր ժամանակներում և տարբեր առիթներով խոցել է Չարենցի սիրտը: Այդ են վկայում նրա «Ազգային երագ»-ը, «Ողջակիզվող կրակ»-ի առաջին մասը, «Երկիր Նաիրի» վեպը, «Պատմության քառտղիներով», «Մահվան տեսիլ» պոեմները: Չարենցի երկվություն ապրող սիրտը բզկտվում էր: 1918թ. «Ողջակիզվող կրակ»-ի մեջ նա դիմում է իր հայրենակիցներին.

*Ինչպե՞ս պիտի արդյոք հնչեն  
Այս, այս երգերը իմ կարմիր -  
Իմ ավերակ, իմ ո՞րք երկրում...<sup>1</sup>*

Իսկ «Անկումների սարսափից» խորագիրը կրող բանաստեղծության մեջ նա հարցնում է.

*Ի՞նչ է ուզում ինձանից կապույտ մորմոքը հրի,  
Ի՞նչ է ուզում քո հոգին, հազարամյա Նաիրի:  
Եվ ինչո՞ւ ես դու փռել իմ դեմ քո բույրը բույրը,  
Եվ իմ մորմոքը վառել թախիծներով ահավոր...<sup>2</sup>*

Չարենցը չէր կարող անտարբեր մնալ հայրենիքի կործանման սարսափի և անկման մահագույժի հանդեպ: Նրա հայագրի առաջ միշտ արյունաքամ ժողովուրդն ու հայրենիքն է եղել՝ ծվատված, բզկտված թուրքական դաժան արշավանքի հետևանքով: Հայաստանի ողբերգական կացությունը նրան հուզել է անգամ այն պահերին, երբ իրեն հայտարարել է հեղափոխության երգիչ: Այդ ապրումի բանաստեղծական խտացումը չե՞ն, արդյոք, 1920-21 թթ. ստեղծված «Տաղարան»-ի հետևյալ տողերը.

*Ո՞ր էլ լինեմ, չեմ մոռանա ես ողբածայն երգերը մեր,  
Չեմ մոռանա աղոթք դարձած երկաթագիր գրքերը մեր,  
Ինչքան էլ սուր սիրտս խոցեն արյունաքամ վերքերը մեր,  
Էլի ես որք ու արնավառ իմ հայաստան յարն եմ սիրում...<sup>3</sup>*

Հայոց մեծ ողբերգությունը ցավի ու վշտի տարբեր երանգներով արտացոլվել են Ն. Չարյանի, Գ. Մահարու, Գ. Սարյանի, Թ. Հուրյանի, Հ. Ծիրագի, Պ. Սևակի, Հ. Սահյանի, Գ. Էմինի, Ս. Կապուտիկյանի, Վ. Դավթյանի և ուրիշ անվանի բանաստեղծների ստեղծագործություններում: Սփյուռքահայ բանաստեղծներն օտար ափերում 1920-ական թթ. սկզբին դեռ փայփայում էին մի օր Արևմտյան Հայաստան վերադառնալու հույսը: Ռ. Որբերյանը Փարիզում վերադարձի այդ փափագն արտահայտել է այսպես.

*Կարոտակեզ գավակդ քեզ պիտի գա,  
Չի մարեցավ դեռ հոգվույն խորն հույսին հուր,  
Ու կը հավտա գարուններուն ապագա...<sup>4</sup>*

Վերադարձի այդ հույսն աստիճանաբար վերածվում է անհուն կարոտի: Կորուստը շատ մեծ է: Դա հող-հայրենիքի, պապերի աճյունների, անցյալի կորուստն է: Լևոն Չավեն Սյուրմեյանն Ամերիկայում գրում է երգեր, որոնց քնարական հերոսը տնկում է խնձորի ծառ՝ ուշքն ու միտքը ավերված հայրենիքում: Նա աղոթում է առ Աստված և

<sup>1</sup> Ե. Չարենց, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 1, ՀՍՍՌ, ԳԱ հրատ., 1962, էջ 167:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 209:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 246:

<sup>4</sup> «Ցեղին սիրտը», Արևմտահայ բանաստեղծություն, «Արևիկ» հրատ., 1991, էջ 176:

շնչում. «Մենելներուս իբրև խաչ՝ ես այս ծառը տնկեցի»: Սփյուռքի հայ բանաստեղծը գիտակցում էր, որ օտար հողի վրա ունի կորուսյալ անցյալ ու ապագայի չմարող հույս: Նա մի կողմից իր հոգու աշխարհում վերստեղծում է գերված երկրի պատկերը, մյուս կողմից սրտի ափերով շոյում Արագածի լանջերին փրկված փոքրիկ Հայաստանը: Մուշեղ իշխանը այդ զգացումն արտահայտել է հետևյալ տողերում.

*Լիբանանի սա հեռավոր լեռներեն  
Ողջույն ձեզի, Հայաստանի բանվորներ,  
Դուք դեռ հազիվ անցած արյան ծովերեն,  
Նոր ձև ու կյանք կուտաք երկրին մեր ավեր:<sup>1</sup>*

Գնալով Մեծ եղեռնի թեման հայ բանաստեղծների երգերում պատկերվում է որպես Հայ Դատի պահանջ, որը խարսխված է հայրենի հողին, ինչպես ներկայացնում է Չահրատը.

*Այս հողը հողեղեն ամենն կապույտն է,  
կապույտը երկնքիդ ծովերուդ նման է,  
Հերկն հոգիս, հերկն - այս հողը կապույտ է,  
Հող չէ - քու կյանքդ է...<sup>2</sup>*

Սփյուռքի բանաստեղծները, որ իրենց հոգիներում ունեն հարևանապարտության լավագույն ավանդույթները, պետք է ստեղծեին նաև իրենց նոր ճակատագրին համահունչ երգը: Բայց ինչպե՞ս: Հայ գրողը հետ էր նայում, հիշողության մեջ կրակներից ճարճատում էին մեր դարավոր քաղաքներն ու շենքերը, կոպերի տակ տեսիլքի փոխված՝ երևում էին միլիոնների արյունոտ, անթաղ դիակները՝ Մասիսի լանջերից մինչև Դեր-Ջոր: Ահա այդ համազգային ընդհանուր վշտի մեջ սփյուռքահայությունը ոչ միայն կարողացավ ոտքի կանգնել, շտկել մեջքը, այլև ուժ գտավ հնչեցնելու իր քնարը կարոտի բազմաշերտ երանգներով: Հնչեց նրա նորօրյա երգը՝ կորստյան ահավոր երանգներով: Սփյուռքահայ գրողները կորուսյալ հայրենիքի կարոտն առնելու համար առաջին հերթին դիմեցին հայրենի բնությանը՝ նրան ներդաշնակելով իրենց ցաված հոգիները: Այդ մասին դիպուկ է ասել Համաստեղը. «Մենք, ինչքան նման ենք ծովին, որ խաղաղ է մեր հոգիին պես, տխուր մեր հոգիին պես, մտածկոտ՝ իր գեղեցիկ կոպտության մեջ: Ծովը իր մեջ ամբողջ երկինք մը աստղերով ծանրացավ, ճիշտ մեր հոգիին պես»:<sup>3</sup> Ծովի տխրությունը, խորհելը, հառաչելը, փոթորկվելը, հիրավի, հայոց հոգու բանաստեղծական ամանցումն է: Վերհուշը դարձավ ցավից հայրենապատումի անցման հիմնական զարկերակը, որի բաբախումների մեջ կարելի է լսել Վահան Թեքեյանի, Ժազ Հակոբյանի, Վահե Վահյանի, Անդրանիկ Ծառուկյանի, Բյուզանդ Թոփալյանի, Լուստան Չարյանի, Գեղամ Աթմաճյանի, Միսաք Մանուշյանի և այլոց սրտերի տրոփյունը: Այդ զարկերից ստացած առաջին զգացումը ցավի և վշտի թրթռներն են: Վ. Թեքեյանը առաջիններից էր, որ բանաստեղծական պատկերի մեջ ներկայացնում էր իր հոգին, որտեղ մարում էին «Երկնքի լուսերն ալ մի առ մի»: Հուսահատության այս նոտաները բնական ու հասկանալի են: Անարդար աշխարհի առջև գլխատվեց մի ողջ ժողովուրդ, որի բեկորները անապատների միջով մագապուրծ հանգրվանեցին

<sup>1</sup> Վ. Գաբրիելյան, Սփյուռքահայ գրականություն, «Լույս» հրատ., 1994, էջ 333:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 211:

<sup>3</sup> Համաստեղ, Աղոթարան, Բեյրութ, 1957, էջ 151:

աշխարհի տարբեր ծագերում: Հայ բանաստեղծների մտահոգությունն օտար ափերում ազգային ոգու պահպանումն էր: Դիմելով ընթերցողին՝ Վ. Թեքեյանը հնչեցնում էր այն ամուր պահելու կոչը: Բանաստեղծը հայտարարում է հայ ոգու շարունակվող գոյությունը՝ ի հեճուկս բոլոր դաժանությունների: 1920-1940-ական թթ. սփյուռքահայ իրականության մեջ հայրենիքի ճակատագրի բանաստեղծական նկարագրի բոլոր երանգները կարելի է տեսնել Վ. Թեքեյանի, Կ. Չարյանի, Մ. Իշխանի ստեղծագործություններում: Այդ տարիներին որպես սփյուռքահայ պոեզիայի տաղանդավոր ներկայացուցիչներ՝ նրանք ճանապարհ էին հարթում ստեղծագործող նոր սերունդների համար: Պատմությունն ապացուցում էր, որ կորուսյալ Մեծ Հայքի մի կտոր փրկված հողի վրա՝ Արագածի շուրջ՝ գերված Մասիսի դիմաց, մի բուռ դարձած հայ ժողովուրդը ոչ միայն վերընձյուղվում է, այլև մագնիսական ուժով դեպի իրեն է ձգում սփյուռքի այն մտավորականների ուշադրությունը, ովքեր թերահավատ էին Խորհրդային Հայաստանի հանդեպ: Այդ առումով նշանակալից երևույթ էր Վ. Թեքեյանի «Ներկա Հայաստանին» շարքը՝ բաղկացած երեք տոնետից: Նա արդեն գրկաբաց ընդունում էր կրակների միջից փյունիկի պես ծնված երկիր-իրողությունը: Եվ Ս. Կապուտիկյանը, ողջունելով սփյուռքահայ գրողներին, ընդգծեց.

*Դուք հայրենիքի ծաղկումին ի տես՝  
Ուրախությունից մանկացած այրեր,  
Ուր տարիներով բռբկացած քայլել,  
Ու մեզ եք գալիս ուխտավորի պես,-  
Զգաստանում եմ ես ձեր հայացքից,  
Երկյուղած, սիրով ու հավատացող,  
Որ Հայաստանի ամեն մի ծաղկին  
Այնպես է իջնում, ինչպես լույսի շող:<sup>1</sup>*

Հայ պոետների մեջ Մեծ եղեռնի թեմայի ամբողջական արծարծման ուղղությամբ առանձնապես աչքի ընկան Հ. Ծիրազը, Պ. Սևակը, Վ. Դավթյանը, Գ.Էմինը:

Հայ ժողովրդի բախտի ոլորանները, Հայաստանի գերված սարերն ու գետերը, աշխարհով մեկ սփռված հայերի ճակատագիրը, հայ մարդու պահանջատիրությունը նորովի հնչեցին Հ. Ծիրազի պոեզիայում: Ազգային խոր ցավը մինչև իր կյանքի վերջն ուղեկցեց մեծ բանաստեղծին: Ծիրազը, հետևելով Ե. Չարենցին, նրա օրինակով ստեղծեց մի նոր Դանթեական: Պոեմի բնաբան ընտրելով «Հայերի դատը մարդկության դատն է» արտահայտությունը՝ Ծիրազը դժոխքի պատկերը ներկայացրեց հանձին եղեռնված Հայոց աշխարհի: Դանթեին դիմելով՝ բանաստեղծը սրտածանիկ էպիգրոֆների օգնությամբ ցույց տվեց մի կողմից անմեղ հայերի անլուր տառապանքները, մյուս կողմից ցատումով ներկայացրեց թուրքերի գազանություններն ու անմարդկային արարքները մեր արդարադատ ժողովրդի հանդեպ, որոնց պատճառով Արևմտահայաստանը «դարձավ դժոխքի դժոխքը դժխեմ»:

Անդրադառնալով կորուսյալ հայրենիքի թեմային՝ Ծիրազը դատապարտում է ցեղասպանությունը և կրծքի տակ օրորում կորուսյալ մեր երկիրը վերադարձնելու հույսը: Բանաստեղծը լենթորեն ձուլվում է Հայաստանին, Հայաստանն էլ՝ իր երգիչ

<sup>1</sup> Ս. Կապուտիկյան, Երկերի ժողովածու 2 հատորով, հ. 1, «Հայպետհրատ», 1972, 403:

որդուն: Ու թվում է, թե՛ հայոց գերված սարերն ու գետերը ոչ թե՛ Արաքսի այն կողմն են, այլ Շիրազի հոգում: Այստեղից էլ՝ մեր ազգային խորհրդանիշ Մասիսի կերպարի բազմակողմանի դրսևորումը նրա ստեղծագործություններում: Արարատի հանդեպ ունեցած սերը Շիրազը ներկայացնում է որպես մոր կաթի հետ իր արյանն անցած ավիշ: Բանաստեղծը նայելով Մասիսին՝ մռնչում է առյուծի պես ու ծածանում նրա ազատագրման փափագը. «Նա է կարոտն իմ անսահման՝ քարերն ի վեր, ի վեր Մասիս, Թող ամպ ու շանթ գլխիս ռոճան՝ սարերն ի վեր, ի վեր Մասիս... »<sup>1</sup>

Շիրազի պոեզիայում շունչ են առնում Սիսն ու Մասիսը, Անին ու Վանը, Եփրատն ու Տիգրիսը, Աղթամարն ու Նարեկը, մի ամբողջ կորուսյալ հայրենիք: Զգայուն ողբասաց չէ բանաստեղծը, նա հայրենիքը գերությունից փրկելու կոչն է հնչեցնում.

*Հագար տարվա կարոտ ունի իմ երազը հագարաթև,  
Ա՛խ, թեկուզ լուռ, դեռ ավերակ, տեսնեմ Անին ու նոր մեռնեմ,  
Անցնեմ դարեր ոտք չդրած հող ու հանդով իմ պապերի,  
Հայոց խոփի համբույրի տակ տեսնեմ Անին ու նոր մեռնեմ,  
Կրծքիս սեղմեմ բերդերս ավեր, բուրի տեղ տոխակ դառնամ,  
Որպես երգ ու վարդի քաղաք՝ տեսնեմ Անին ու նոր մեռնեմ:<sup>1</sup>*

Հայոց Մեծ եղեռնի թմանն իր նոր, յուրահատուկ արտացոլումը գտավ Պ. Սևակի «Եռածայն պատարագ» և «Անլուելի զանգակատուն» պոեմներում: Բանաստեղծը «Զանգակատունը» նվիրեց հայ ժողովրդի համար խորհրդանիշ դարձած Կոմիտասի կյանքին ու նրա կատարած գործի պատմական ու արդիական նշանակությանը: Պ.Սևակն իր անգուցական տաղանդի հզոր ուժով Կոմիտասի ողբերգական ճակատագրի մեջ խտացրեց հայ ժողովրդի ճակատագիրը և ցեղասպանությանը հայտարարեց՝ ո՛չ: Բանաստեղծը բացեց հայկական ոգու առեղծվածը՝ ընդգծելով հայ ժողովրդի անմահության գաղափարը.

Վ. Դավթյանն իր պատմական պոեմներում երիցս անդրադարձել է ժողովրդի պատմական ճակատագրին: Նա դեռևս «Կոմիտաս» պոեմից առաջ գրել էր «Բալլադ Կոմիտասի մասին» գործը: Ծարունակելով Չարենցի ավանդույթը՝ Վ. Դավթյանը Կոմիտասի կերպարն ստեղծեց եղեռնի ենթարկված ժողովրդի ցավի ու ողբերգության համապատկերին: Բանաստեղծը, պատկերելով Կոմիտասի խելագարության պահը, նրան ներկայացնում է որպես խորհրդանիշ: Պոեմը թեկուզ սեղմ, սակայն ընդգրկում է, ներգործող, ցավի և վշտի մի համանվագ:

1977թ. Վ. Դավթյանը ստեղծեց «Ռեքվիեմ» պոեմը, որը 1915թ. մեր ժողովրդի ապրած ողբերգության գեղարվեստական ինքնատիպ վավերագրություններից է: Բանաստեղծին հաջողվել է տեսիլքային պատկերների հնարանքով լեզու հաղորդել մեր անանցանելի կորուստներին: Ստեղծելով ոսկոր-սրինգ-քամի-ողբ պատկերը՝ Դավթյանն ընդգծել է այն գաղափարը, որ անտարբեր աշխարհի աչքի առաջ երիտթուրքական հրոսակները սրի քաշեցին մեկուկես միլիոն անմեղ հայերի, և արյունաքամ ողբում են ոչ միայն ապրողները, այլև ամբողջ երկիրը՝ կորուսյալ մի ողջ հայրենիք՝ Արևմտյան Հայաստան անունով... Ողբում են նրա սարերը, դաշտերը, անթաղ ոսկորները, հողն ու երկինքը: Այդ անմոռանալի վիշտն իր կրծքի տակ կրում է սքեմավոր մի այր, որը ծնկի է իջնում անապատում և սկսում «մի սուրբ պատարագ»:

<sup>1</sup> Չ. Շիրազ, Երկերի ժողովածու 5 հատորով, հ. 2, «Հայպետհրատ», 1982, էջ 327:

Պոեմը տեղին ու ճիշտ է գնահատել անվանի գրականագետ Դ. Գասպարյանը՝ ընդգծելով. «Ռեքվիեմ»-ը հիշատակի պատարագ է, որ բանաստեղծը կատարում է ողբի անապատում և կատարում է խոսքով, նրգով ու աղոթքով, կատարում է՝ դառնալով խաչ ու խաչքար, խունկ ու բուրվառ»:<sup>1</sup> Հայ ժողովրդի նոր հարության փառապանծ մի էջ է Արցախյան շարժումը Ադրբեյջանի կողմից մեր ժողովրդին պարտադրված պատերազմի դեմ, որը վերածվեց ողջ հայության կողմից մղվող ազատագրական պայքարի: Երիտթուրքերի օրինակով բաղիրովները, էլչիբեյները, ալիևները հայ ժողովրդի հանդեպ կազմակերպեցին Սուլթան Համիդի ու նրա ժառանգորդների թողստությունը՝ ազգային խրախուսում, Բաքուում, Գետաշենում, Գանձակում, Մարաղայում և հայաշատ այլ բնակավայրերում: Գորբաչովի ու նրա արբանյակների թողստությամբ ազերի-թուրքերը ձգտեցին Արցախը դարձնել հայկական գերեզմանոց, սակայն պատմական դառը փորձը հուշեց մեր ժողովրդին, որ 1915 թվականը չպետք է կրկնվի: Ոտքի ելավ արցախահայությունը, արթնացավ հայկական ավարայրված ու սարդարապատված ոգին, դողանջեց համայն հայության միասնության օրհներգը, թևաբախեց մարտականչ նրգը: Բանաստեղծներ Գ. Գաբրիելյանը, Վ. Հակոբյանը, Հ. Բեգլարյանը, Ս. Խանյանը, Դ. Միքայելյանը, Ա. Հովհաննիսյանը, Ն. Ավագյանը, Ն. Գասպարյանը, Հ. Ալեքսանյանը, Ա. Արսենին, Ժ. Բեգլարյանը և ուրիշներ գրեցին պոեմներ, ասքեր, բալլադներ: Անդրանիկի ու Նժդեհի ժառանգորդները հանդիսացող հայ զինվորների անունից պոեմ-ազատամարտիկ Ռ. Եսայանը գրեց.

*Հայոց երկրի շուրթը արկել է որպես աղեղ՝  
Ժամանակը խոսքն է նետի պես արձակում,  
Որ սուրալով տարածքներում տիեզերքի՝  
Չի գտնում ծով լայնության մեջ խղճի մի կետ,  
Որտեղ խրվի ցավամոռաց ու նրերա.  
«Արդարություն, թող ես թքնեմ քու ճակատիդ»:<sup>2</sup>*

Իսկ ուսանող բանաստեղծ Կոմիտաս Հակոբյանը Ջրաբերդի բարձունքներում հայրենիքի երգը շուրթերին՝ իր գլուխը դրեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության լինելության գոհասեղանին, որ աշխարհով մեկ սփռված հայությունը հավերժության մեջ հնչեցնի դեռևս մեծ ողբերգության օրերին հանճարեղ Թումանյանի ցավի ու արցունքի միջից ծնված լավատեսական այս աղոթքը.

Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած,  
Հագար-հագար լուսապայծառ հոգիներով ճառագած,  
Ու նրկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ լանջին,  
Կենսաժրափոխ իր շողերը պիտի ժպտան առաջին,  
Ու պոեմներ, որ չեն պղծել իրենց շուրթերն անեծքով  
Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով.

*Իմ նո՛ր հայրենիք,  
Հրգո՛ր հայրենիք... :<sup>3</sup>*

<sup>1</sup> Դ. Գասպարյան, «Վահագն Դավթյան», Կրթության Ազգային Ինստիտուտ, 2007, էջ 253:

<sup>2</sup> Ռ. Եսայան, Հարության ժամանակը, «Դիզակ Պլուս», 2011, էջ 161:

<sup>3</sup> Հ. Թումանյան, Երկեր 4 հատորով, հ. 2, «Հայաստան» հրատ., 1969, էջ 214:

## Ամփոփում

Սույն հոդվածում նշվում է, որ Օսմանյան Թուրքիայում իրականացված Հայոց ցեղասպանությունը դատապարտող պոեզիան հայ գրականության մեջ սկիզբ է առել 1915թ. հետո: Նրանում վերլուծվում են Վ. Տերյանի «Երկիր Նաիրի» շարքը, Ավ. Իսահակյանի ֆիդայական երգերը, Ե. Չարենցի «Դանթեական առասպել», «Աթիլլա», «Ազգային երազ» պոեմները և այլ բանաստեղծություններ: Քննարկվում են Հ. Շիրազի «Հայոց դանթեականը», Պ. Սևակի «Անլուելի զանգակատուն», Վ. Դավթյանի «Ռեքվիեմ» պոեմները: Ուշադրության կենտրոնում են նաև սփյուռքահայ բանաստղեծներ Վ. Թեքեյանի, Սուշեղ Իշխանի և մյուս անվանի բանաստեղծների ստեղծագործությունները: Հոդվածի հեղինակն ընդգծում է այն միտքը, որ այդ թեման հայ պոեզիայում խիստ խարազանում է ցեղասպանությունն ընդհանրապես:

## Геноцид армян в армянской поэзии

Сократ Ханян

### Резюме

**Ключевые слова:** 1915г., 24 апреля, геноцид, Дер-дзор, поэты, поэзия, столетие, диаспора, Сумгаит, Баку, Арцахская война, победа.

В данной статье отмечается, что армянская поэзия, бичующая геноцид армян в Османской Турции, берет свое начало после 1915 года. В статье разбирается цикл стихов Теряна “Страна Наири”, песни о фидаинах Ав. Исаакяна, поэмы Чаренца “Дантовский миф”, “Атилла”, “Национальный сон”.

Обсуждаются поэмы “Дантовская Армения” Ов. Ширазы и “Несмолкающая колокольня” П.Севака. В статье отмечается, что эту тему затрагивали также поэты армянской диаспоры - такие, как В.Текеян, М.Ишхан и другие. Эта тема в армянской поэзии вырастает до резкого осуждения геноцида вообще.



**The Armenian Genocide in Armenian poetry**

Sokrat Khanyan

**Summary**

**Keywords:** 1915, April 24, genocide, Der-Dzor, poets, poetry, centenary, diaspora, Sumgait, Baku, Artsakh war, victory

The article notes that the Armenian poetry which condemns the Armenian genocide in Ottoman Turkey, appeared after 1915. The article sorts out the cycle of poems by Teryan and "Country Nairi", a song about the "fedayeen" Av. Isahakian's poem, Charents "Dante's Myth", "Attila", "National Dream", which condemn the policy of the Young Turks.

The poems "Dante Armenia" by H. Shiraz, "Never abating Bell Tower" by P. Sevak, "Requiem" by V. Davtyan are studied and discussed in the article. The author of the article focuses on the idea that the issue of the genocide was highly condemned in Armenian poetry in general.